



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ

### WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ԱԼՊԵՐ ԱՃԵՄԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի, 5 Ապրիլի յետմիջօրէին, Ազգային Առաջնորդարան այցելեց ազգային գործիչ եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի նախկին անդամներէն Տիար Ալպեր Աճեմեան, որ կարճատեւ այցելութեամբ Լոս Անճելըս կը գտնուի շարք մը դասախօսութիւններու եւ մեր ազգային-կրթական կեանքին անմիջականօրէն աղերսակից դառնալու համար: Տիար Ա. Աճեմեանի կ'ընկերանար Հ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան: Ներկայ էր նաեւ Ազգային Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պողոսեան:

Նկատի ունենալով, որ յարգելի հիւրը Հայաստան հաստատուած է վերջին տարիներուն, խօսակցութեան սիւթ եղան հայրենի իրադարձութիւնները, ապա նաեւ Արտերկրի հարցերը, Հայաստան-Սփիւռք գործակցութեան թէ հայապահպանման ոլորտին մէջ: Առաջնորդ Սրբազանը ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ փոխանցեց Ազգ. Առաջնորդարանին ու անոր հովանիին տակ տեղի ունեցող բազմաճիւղ աշխատանքներուն մասին, որոնք կը միտին հոգեմտաւոր ծառայութիւն տրամադրել մեր ժողովուրդին, իսկ նոր սերունդին փոխանցել հայկականութեան ջահը: Տիար Ա. Աճեմեան նաեւ ծանօթացաւ Ազգ. Առաջնորդարանի բաժանմունքներուն եւ գոհունակութեամբ հրաժեշտ տուաւ Ազգային այս հաստատութեան: Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը անոր յանձնեց Ազգ. Առաջնորդարանի »Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն« մատուռը խորհրդանշող յուշանուէր մը:

### PRELATE WELCOMES COMMUNITY LEADER ALBERT AJEMIAN

On Tuesday, April 5<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy former ARF Bureau member Mr. Albert Ajemian, who was invited to Los Angeles for a series of lectures and meetings. Mr. Ajemian was accompanied by ARF Central Committee Chair Mr. Avedik Izmirlian. Prelacy Executive Council Chair Mrs. Rima Boghossian participated in the meeting.

Given that Mr. Ajemian has been living in Armenia for the past few years, the discussion centered on the current situation in Armenia as well as Armenia-Diaspora relations and collaboration.

The Prelate reported on the various endeavors carried out by the Prelate and familiarized Mr. Ajemian with the departments serving under the umbrella of the Prelacy.

At the conclusion of their meeting, the Prelate presented Mr. Ajemian with a memento depicting the Prelacy "St. Dertad and St. Ashkhen" Chapel.